24.03.2022թ.
349-76

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարար Վահրամ Դումանյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Դումանյան,

Ի պատասխան Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ մայիսի 17-ի տեղեկություն ստանալու հարցման, ԿԳՄՍ նախարարությունը պատասխան գրությամբ տրամադրել է պատասխան, որը լրացուցիչ պարզաբանման կարիք ունի (պատասխանը կցված է հավելվածով)։

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել լիարժեք պատասխաններ հետևյալ հարցերի վերաբերյալ.

1. Արդյոք արդեն իսկ հաստատված են 2021-2022 ուսումնական տարվա ավարտական քննությունների ժամկետները 9-րդ և 12-րդ դասարանցիների համար։ Եթե այո, ապա խնդրում ենք տրամադրել ժամանակացույցը։
2. Նախարարության տրամադրած պատասխանից կարելի է եզրակացնել, որ ավարտական քննությունների ժամկետները հաստատելու գործընթացը կախված է ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված աշխատակարգից, որը դեռևս հաստատված չէ: Խնդրում ենք հստակեցնել, թե ինչ ժամկետներում է նախատեսվում Նախարարի՝ աշխատակարգը հաստատող հրամանը։

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն։ Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով։***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am